



ՀՀ Էկոնոմիկայի նախարարության  
«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»-ը  
«Երիտասարդ նորարարների դպրոց» երկարաժամկետ  
ծրագրի շրջանակներում ներկայացնում է նոր  
«Նորարարությունների կառավարում» կրթական  
ծրագիրը, որը կմեկնարկի **2016 թ. մայիսի 2-ից**:

Հաջողակ բիզնեսում կարևոր են խնդիրների ոչ ստանդարտ լուծումները, նոր գաղափարները, ստեղծագործական մտածողությունը և նորարարական մոտեցումները: Շատ կարևոր է սակայն նորարարության և առողջ բանականության միջև պահպանել հավասարակշռություն, կարողանալ ցուցաբերել ինքնատիպություն, բայց միևնույն ժամանակ ապավինել իրական բիզնես-խնդիրներին և ակնկալվող շահույթին:

## Ծրագրի կառուցվածքը

### 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

#### Բնավորության անհատական գծեր (Personality Traits) -2 ժամ

- Բնավորության անհատական գծեր:
- Անհատական զարգացում և բիզնես մտածելակերպի ձևավորում:
- Բիզնես և կառավարչական հաղորդակցման հմտություններ:
- Ընդհանրական անձնական հատկանիշներ, որոնք հատուկ են հաջողակ բիզնեսմեններին:

#### Ստեղծագործական և քննադատական մտածողություն (Creative and Critical Thinking) – 6 ժամ

- Ստեղծագործական մտածողության հիմնական հասկացությունները, նմանությունները և տարբերությունները:
- Ստեղծագործական մտածողության միջոցով նորարարական գաղափարների զարգացում:
- Յուրաքանչյուր մասնակցի «Ստեղծագործական հանձար»-ի բացահայտում:

#### Նորարարություն (Innovation) – 6 ժամ

- Ի՞նչ է «Ինովացիա»-ն:
- Ինովացիայի, ստեղծագործական մտածողության և գյուտի միջև առկա տարբերությունները:
- Ինովացիան որպես բիզնեսի հաջողության գրավական:
- Ինչպե՞ս է նորարարությունը անդրադառնում տնտեսության զարգացման վրա:



- Ինչու՞ են երկրները համեմատվում ըստ իրենց ինովացիոն զարգացման մակարդակի ցուցանիշների:

### Խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցում (Creative Problem Solving) – 6 ժամ

- Խնդիրների ստեղծագործական լուծման գործընթացի էությունը:
- Խնդիրների ստեղծագործական լուծման գործընթացի «հավաքագրման» և «կենտրոնացման» փուլերում կիրառվող տեխնիկան և հմտությունները:
- Թիմում նոր կամ ոչ ստանդարտ խնդիրների լուծման համար արդյունավետ աշխատանքային մեթոդները:
- Ներքին արգելքները, որոնք սահմանափակում են կրեատիվությունը և դրանք շրջանցող մեխանիզմները:

### Ձեռներեցություն (Entrepreneurship) – 6 ժամ

- Ձեռներեցության և ձեռնարկատիրության սահմանումները և տարբերությունները:
- Ձեռներեցի տիպաբանություն. հատկանիշների բացահայատում և ձեռնարկատերի տիպի ինքնաճանաչում:
- Բիզնես գաղափարի գեներացիա:
- Ձեռներեցության ճանապարհային քարտեզ ( բիզնես գաղափար, կոնցեպցիա, նյութական արժեք և շուկայի հետազոտություն, բիզնես պլան, իրականացում):
- Շահույթի և/կամ սոցիալական բարեկեցության համար արժեքի ստեղծման բիզնես ռիսկերի կառավարում:

### Բիզնես մոդելավորում (Business Modeling) – 6 ժամ

- «Բիզնես մոդել»-ի սահմանում:
- Բիզնես մոդելի «CANVANS»:
- Հաջողակ բիզնես ստանալու առանցքային բաղադրիչները:
- Կազմակերպության ներքին ռեսուրսների կառավարման միջոցով սպառողական արժեքի ստեղծման գործընթացը:

## 2. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### Ձեռնարկատիրություն և իրավական հիմնախնդիրներ (Business and Legal Issues) – 2 ժամ

- Իրավական տեսանկյունից բիզնեսի ճիշտ մեկնարկման և զարգացման արժեքն ու դերը:
- Ձեռներեցներին և նրանց բիզնեսը դեպի կործանում տանող հաճախակի հանդիպող իրավական սխալները:
- Մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման համապատասխան պայմանագրերը, բիզնես կառուցվածքները:
- Բիզնես կառավարումը, էթիկան և ապահովագրությունը:

### Բիզնեսի հիմնում և գրանցում (Business Establishment and Registration) -3 ժամ

- Բիզնեսի ձևավորման գործընթացը, զարգացման փուլերը:
- Բիզնես պլանի իրականացում:





### Մտավոր սեփականություն (Intellectual Property) – 3 ժամ

- Մտավոր սեփականության հիմնական հասկացությունները (ապրանքային նշաններ, գյուտեր, արտոնագրեր, օգտակար մոդելներ և այլն):
- Մտավոր սեփականության կառավարման գործընթացը Հայաստանում:
- Մտավոր սեփականությունը նորարարական ստարտափերի աճի և հաջողության գործընթացում:

### 3. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

#### Մենթորինգ և քուչինգ (Mentoring and Coaching)

- Start-up ստեղծելու համար՝ մենթորինգ:
- Start-up-ը զարգացնելու համար՝ քուչինգ:
- Նորարարական գաղափարների վավերացում:

#### ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ

- Կիրառել ստեղծագործական և քննադատական մտածողությունը միջանձնային, բիզնես և կառավարչական կոմունիկացիաներում:
- Խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման միջոցով զենեքացնել վատ և հետաքրքիր գաղափարներ, ստեղծել նոր ուղղություններ աշխատանքում, կարիերայում, բիզնեսում:
- Կիրառել ոչ ստանդարտ որոշումներ ամենատարբեր իրավիճակներում:
- Հասկանալ «ինովացիայի» ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև գաղափարը հաջողակ բիզնեսի վերածելու գործընթացի էությունը:
- Հմտանալ բիզնես մոդելավորման ու պլանավորման գործընթացներում և ձեռք բերել համապատասխան ունակություններ, որոնք անհրաժեշտ են «սթարթ-ափ» ստեղծելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար:
- Տիրապետել բիզնեսի ճիշտ մեկնարկման բոլոր իրավական հարցերին և մտավոր սեփականության օբյեկտների պահպանման, կառավարման և առևտրայնացման համապատասխան ընթացակարգերին:
- Օգտագործելով «բիզնես մոդել»-ը որպես պլանավորման ու վերլուծության առաջադեմ գործիք, կազմել ապագա բիզնեսի և ձեռնարկության զարգացման տեսլականը, դրա գրաֆիկական, տեքստային և կոնցեպտուալ նկարագրությունները ըստ հաջողակ բիզնես ստանալու առանցքային բաղադրիչների:
- Ձեռք բերված գիտելիքները օգտագործել սեփական բիզնեսը հիմնելու մեջ:
- Ձեռնարկատիրությանը օժանդակող պետական աջակցության ծրագրերի, առևտրային միավորումների և բիզնես ցանցերի մասին ստացած տեղեկատվությունը օգտագործել իրենց բիզնեսի զարգացման համար:
- Ստեղծել start-up ընկերություններ, վավերականացնել գաղափարը ու առևտրայնացնել այն կամ ղեկավարել այդ գործընթացը:





## ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐՆ ԵՆ

- անհատ գյուտարարներ/նորարարներ,
- ուսանողներ/գիտնականներ,
- գիտահետազոտական կառույցների աշխատակիցներ,
- վաճառքի և մարքեթինգի բաժնի աշխատակիցներ, մենեջերներ
- նորարարական ուղղվածությամբ ձեռնարկությունների աշխատակիցներ, ձեռնարկատերեր,
- սկսնակ գործարարներ, որոնք բավարար փորձ չունեն ձեռներեցության ոլորտում և ցանկանում են տեսական ու գործնական գիտելիքների բազա ձևավորել իրենց հետագա գործունեության համար:

## ԾՐԱԳՐԻ ՁԵՎԱԶԱՓԸ

- Ինտերակտիվ ուսուցում, թեմատիկ խաղեր,
- Օրինակների քննարկում (case study), դրանց հիման վրա նյութի ներկայացում ու յուրացում,
- Խմբերով աշխատանքների կատարում և կատարված աշխատանքի ներկայացում, արդյունքների քննարկում:
- Start-up հիմնելու նպատակով մենթորինգի անցկացում բոլոր թիմերի համար:
- Start-up-ը զարգացնելու նպատակով քոուչինգի անցկացում ընտրված ընկերությունների համար:

## ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դասընթացի/խորհրդատվության ընդհանուր տևողությունն է 40 ժամ/ 6 շաբաթ` շաբաթական 2-3 հանդիպում` յուրաքանչյուրը 3 ժամ տևողությամբ` ներառյալ սուրճի ընդմիջումը: Դասընթացները կանցկացվեն 2 ժամային հատվածներով`

15:30-18:30 և/կամ 18:30-21:30

*Խնդրում ենք դիմում հայտը լրացնելիս նշել Ձեր նախընտրելի ժամային հատվածը:*

Այս փուլից հետո կսկսվեն մենթորինգի աշխատանքները, որից հետո այն թիմերը, որոնք ներկայացումների արդյունքում հաղթող կճանաչվեն կանցնեն քոուչինգի փուլին: Այս գործընթացների մանրամասները կներկայացվեն դասընթացի ժամանակ:

## ԴԱՏԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ



ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Հասցե՝ ք.Երևան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և Ձեռներեցության Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ, Կոմիտաս 49/3, Ք. Երևան, 0051

Դասընթացը կմեկնարկի **ս.թ. մայիսի 2-ից**:

## ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐՆ ԵՆ

**Մարի-Հրաչուհի Պողոսեան** – Հայաստանի Ամերիկյան Համալսարանի բիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դասախոս:

Երկարամյա աշխատանքային գործունեություն «NASA տիեզերական առաքելությունների զարգացման» ծրագրում, որպես նորարարական տեխնոլոգիական առաջարկների վերանայման և գնահատման մենեջեր: Ստեղծարար մտածողության, տեխնոլոգիական ինովացիաների, ինովացիոն ձեռնարկատիրության, համակարգերի նախագծման և արժեքի գնահատման ոլորտներում բազմամյա դասավանդման փորձ:

**Կարեն Հ. Սարգսյան** – «Համայնքային զարգացման նորարարական կենտրոն» հասարակական կազմակերպության փոխնախագահ:

Բիզնես կարողությունների զարգացման, համայնքային տնտեսական զարգացման, կազմակերպությունների զարգացման, ինչպես նաև մարդկային ռեսուրսների և ռազմավարական գործընթացների նորարարական կառավարման, և հարակից ոլորտներում տեղական և միջազգային ֆորմալ / ոչ ֆորմալ բազմամյա գիտագործնական փորձ:

**Անդրանիկ Ս. Խաչիկյան** – Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պետի տեղակալ:

Բազմամյա աշխատանքային գործունեություն մտավոր սեփականության ոլորտում, և այդ ոլորտում մի շարք ուսումնա-օժանդակ ձեռնարկների, զեկոյցների, թեզիսների և գիտական հոդվածների հեղինակ:

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Ծրագրին մասնակցել ցանկացողները կարող են գրանցվել լրացնելով առցանց դիմում հայտը <https://goo.gl/Crl9gp> մինչև **ս.թ. ապրիլի 28-ը**:





Տեղերը **սահմանափակ** են՝ յուրաքանչյուր խմբում մինչև 20 մասնակից, ուստի մասնակիցների ընտրությունը կկատարվի ըստ դիմելու առաջնահերթության: Ընտրված մասնակիցները լրացուցիչ կտեղեկացվեն հաստատման նամակով:

Հաստատման նամակը ստանալուց հետո անհրաժեշտ է 5-օրյա ժամկետում [innov.school2015@gmail.com](mailto:innov.school2015@gmail.com), [innovsupport@innovcentre.am](mailto:innovsupport@innovcentre.am) հասցեներին ուղարկել վճարման կտրոնի սկանավորված տարբերակը:

Վճարումը կարող եք իրականացնել բանկային փոխանցմամբ՝

- **Կազմակերպություն**՝ «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ ՀՎՀՀ0009989
- **Բանկ**՝ «Կոմվերսբանկ» ՓԲԸ
- **Հաշվեհամար**՝ 1930031500940100
- **Վճարման նպատակ դաշտում խնդրում ենք նշել**՝ «Նորարարությունների կառավարում» ծրագրի մասնակցության վճար:

## ՀԱՎԵԼՑԱԼ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրված լավագույն մասնակիցները հնարավորություն կստանան՝

- Մասնակցելու աշխարհի ժողովուրդներին կայանալիք **«Նորարարությունների կառավարում» II միջազգային երիտասարդական գիտական դպրոցին**, որտեղ կամփոփվեն նաև դասընթացների արդյունքները:
- Ներգրավվելու ՆՁԱԿ-ի կողմից համակարգվող ինովացիոն նախագծերի կառավարման և առևտրայնացման գործընթացներում:
- Երկար ժամանակ կցվել քույրերին, ովքեր կզարգացնեն բիզնեսը և կփորձեն նաև ֆինանսական միջոցներ ներգրավել:

## ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔՆ Է

Ծրագրի արժեքը կազմում է **35000** ՀՀ դրամ, որը ներառում է՝

- 40 ժամ տևողությամբ դասընթաց և խորհրդատվություն,
- Մինչև 1 ամիս տևողությամբ մենթորինգային աշխատանք,
- Լավագույններին բիզնեսի զարգացման նպատակով քույրինգ,



Ինչպես նաև.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության գերատեսչության մասնակցության վկայական,
- Բացառիկ ուսումնական նյութեր, որոնց արժեքը մի քանի անգամ ավելին է,
- Սուրճի ընդմիջումներ, նորարար մարդկանց հետ հանդիպումներ:

Մանրամասների համար՝ [innov.school2015@gmail.com](mailto:innov.school2015@gmail.com) , [innovsupport@innovcentre.am](mailto:innovsupport@innovcentre.am)  
Հեռ. (+374 11) 236554 , (+374 11) 238747, (+374 99) 969247

